

ԱՐՈՒՍԱՆԸ ՀԱՅ ԱՐԱՐԱԳԻՐ ՊԱՏՄԻՉ

ԵԿԵՂԵՑԵԱՅ ԵՒ ՎԱՆՈՐԷՒՑ ԵԳԻՊՏՈՍԻ

الشيخ ابي صالح الارمني



Ժէ դարուն կիսէն վերջ՝ Սաքս-կոթայ զուգան՝ իր ազգակից և կրօնակից (լութե-րական) եթովպագէտ ՅՎ. Միքայել Վանսլէր երիտասարդը (Wansleb կամ Vansleb ծն. յ. 17ֆորդ, 1635 + 1679), խաւրեց յԱ-փրիկէ, Ղպտեաց և Եթովպացաց կրօնից վրայ տեղեկութիւն և արեւելեան հին ձե-ռագիրներ ստանալու. զոր և ըրաւ առ, բայց չկրցաւ գոհացնել զգուրջը. ինքն ալ տօգոհ՝ զնաց ի Հռովմ, կաթողիկոսայ դաւանանքն ընդունեցաւ, և մտաւ ի կրօն Դոմինիկեանց. յետոյ զնաց ի Պարիս, ուր ժիւ Լոդովիկոսի բանասէր պաշտօնեայն Քուլպերտ՝ նորէն զրկեց զնա յԵգիպտոս, ա-րեւելեան ձեռագիրներ ժողովելու. որ և յա-նդեցաւ 330էն աւելի արաբերէն, Թուրքա-րէն և պարսկերէն գրքեր հաւաքել և բերել: Ասոնց թուէն էր և արաբերէն պատմութիւն մի Արա Սայիհ Հայ անուանելոյն: Չեռա-գիրն բաւական հին է, 1338ին գրուած. հե-ղինակն յայտնապէս հնազոյն, ԺԳ դարուն սկիզբները վախճանած: Գրքին առաջին 20 թուղթերն կորած ըլլալով՝ անոր բուն վեր-նագիրն կամ անունն այլ չկայ. բայց ետեւի գրուածներէն՝ (որ բովանդակեն 113 թուղթ), յայտնուի՝ որ պատմութեան նիւթն է՝ մեր վերը նշանակածը. — Արաբագէտ և արեւ-ելուքաբեր բանասէր, ինչպէս Գառըրմէր այս դարուս, և մանաւանդ Րենոդոյ (Re-naudot) ԺԼ դարու սկիզբում, շատ բան քաղեցին այս պատմիչէն, արեւելեան և յատ-կապէս Աղեքսանդրիոյ եկեղեցւոյ կամ պատ-րիարքաց վրայ: Ասոնց թարգմանած կտոր-ներէն մենք այլ առեւնաք օգտուելով՝ ազգային տեղեկութիւններ տուած էինք (ի Ներս. Ենորհայի և Պարազայ իւր, եր. 162-70), Անոնցմէ շատ աւելին գրած համարին նոր բանասէրք՝ Հայոց վրայ: Երովհետեւ հիմա Հայոց վրայ պատմելով կու սկսի գիրքն, ուս-կից հետեւցնեն թէ կորսուած առաջին մասն այլ առաւելապէս մերայոց վրայ: Երկու դարէ աւելի շատ օտարաց այլ մեզ այլ քանակով՝ բայց գրեթէ անմատչելի եղած այս պատմագիրքս, (թէ արաբերէն լեզուով

և թէ դժուարընթերց գրչութեամբ ըլլալուն), վերջապէս այս տարուան սկզբում՝ Փռան-կաց ուսմանց պաշտօնէի շնորհիւ առ Ան-լիացի գիտնականս, ի լոյս ընծայեցաւ, թէ բնագիր լեզուան և թէ անգլիարէն թարգ-մանութեամբ Երեստո անուամբ (B. T. Evetts. M. A) գիտնականի համալսարանին Օքսֆոր-տի, ուր և տպագրեալ է ճոխ ծանօթու-թեամբ, որ գրեթէ հեղինակին գրածէն ա-ւելի են. և զորս շատ մասամբ տուած է գիտ-նազոյն մի, Բըալթեր Ալփրետ (Butler) հեղի-նակ հետաքննելի գրքի մի՝ Եգիպտական հին եկեղեցեաց վրայ, (The ancient Coptic Churches of Egypt). ձեռնառու եղած է մա-սամբ և բազմակնուտ հայագէտ, և քանի մի տարիէ վեր ծանօթ մեր ազգային բանասի-րաց և ասոնց օրագրաց մէջ կոնքիքի (F. C. Conybeare), որ և զուարթաւորաւ աղը-ւութեամբ ընծայեց մեզ օրինակ մի Արուսակի-թանկ և հետաքրքրական գրոց. որոյ համար կարեւոր պարտք համարիմք հրապարակել հոս մեր շնորհակալիքը:

Պալով առ հեղինակն, զոր ըստ մեր մա-տենագրաց և ազգային սովորութեան ջրու-սանչ անուանեմք (փոխանակ Սայիհ բաւու), ով և որոյ որդի և երբ Եգիպտոս եկած ըլ-լալն՝ չի յիշուիր. որովհետեւ, ըստ վերոյգրե-լոցս, գրքին սկիզբն պակաս ըլլալով՝ իր վրայք ըստծն այլ (եթէ բաւէ էր), պակսի-բայց իր պատմութեան մէջ շատ հեղ զինքն և իր ժամանակակիցները յիշելէն՝ յայտնուի, որ 1170էն մինչև 1208 տարին ներկայ է եղեր ոմանց իր պատմած գիպաց և անձանց: Բայց աւելի ստոյգ ըսելով, ոչ միայն իր գրածին սկիզբն պակաս է, այլ կերպով մի և բոլոր գրուածն այլայլեալ, բայց ոչ խա-նդարեալ: Վասն զի ձեռագրին ընդօրինա-կողն՝ այսպէս կ'աւանդէ. « Հօս վերջնայ » պատմութեանս հեղինակին գործն, զոր » անկարելի էր իրեն ամբողջացնել, երկրիս » երեսաց ընդարձակութեանն չլիամար՝ ընդ » արեւելս և ընդ արեւմուտս. սակայն այն » չափ նիւթ հաւաքած է որչափ ոչ գրիմք » գտաւ, և մեծ խնամքով ըրած է գործը:

» միանգամայն և համառօտ է ի բացատրու-
 » թեան, վասն զի աւելորդ համարու է ճո-
 » խարանել ի պատմութեան: Իսկ խեղճ,
 » Յշուառ և տկար գերիս՝ ընդօրինակողս,
 » ինչ որ գտայ դայն օրինակեցի, առանց ա-
 » լելցնելու կամ պակսեցնելու, (բայց վերջը
 » կ'ընէ թէ համառօտեր է), առաջնորդու-
 » թեամբ Շէյխ Ար-Բայիս ալ-Աբրամ Ա-
 » պուլֆարահի, որդւոյ Շէյխ Բաֆայիլի,
 » որդւոյ Ապուլ Ֆարապի քահանայի Սան-
 » դուք ալ-իւմ (Գիտութեաց անտուէ) ա-
 » նուանելոյ, որ Մարտի Աշ-աւ գրեկի ե-
 » կեղեցւոյ քահանայից աւագերէցն էր...
 » Ընդօրինակութիւն գրոցս աւարտեցաւ յո-
 » բն շարթի Փր Բառնա ամսոյ երկուքին,
 » անրիծ Մարտիրոսաց 1054 թուականին,
 » որ է 738 — (Հիճրէդի, և 1338 թուին
 » Քրիստոսի: — Այս վկայութեամբ այլ հաս-
 » տատուի որ գիրքը պահողքն, ընդօրինակողն
 » և հեղինակն այլ քրիստոնեայ էին, գուցէ և
 » ամենքն այլ քահանայ: Աբուսահլ եւս Շէյխի
 » կոչուի:

Յետոյ խոստովանի ընդօրինակողն որ կա-
 ռուոր բան մի դուրս չէ թողած ի հեղինա-
 կէն: Աբուսահլի պատմածներն շատ ճիշդ և
 ստոյգ են, նա և ժամանակագրական և տե-
 դագրական մասամբ, միայն թէ շատ տեղ
 ոճով կարդ մի չունի գիրքն. ետեւ առաջ գրէ
 պատմելիքը, վաւերի կամ եկեղեցւոյ մի վրայ
 գրելէն կ'անցնի Եգիպտոսի եկամտոց կամ
 Նեղոս գետոյն ստորագրութեան, կամ Նա-
 նաւոր անձի մի վարուց. շատ հեղ կ'ալ կրկնէ
 աւաղուան ըսածը. կամ մէկ մասն առաջ պատ-
 մէ, միւսը շատ ետեւ: Այլ ինչ և է, շատ հե-
 տաքնական և հարուստ գիտելիք ունի՝
 Ղպտեաց ճգնաւորաց, վանորէից, եկեղե-
 ցեաց, պատրիարքաց, նա եւ մասամբ Նու-
 բիոյ և Եթովպիոյ վրայ, ուր և թուի անձամբ
 զնացած և տեսած. աւելի առաջ այլ անցնե-
 լով՝ Ափրիկէի հրահայրին կողմանց և Արա-
 բիոյ, և ինչուան ի Հնդկաստան կ'ակնարկէ:
 Երբեմն եւս քաղաքական դիպուածոց վրայը,
 որոց ներկայ եղած է, ինչպէս Սաէհէտտինի
 Եգիպտոսի տիրելուն և աւրածներուն. երկայն
 գրուած մ'այլ Մարկոս Ա-Քանպար անուամբ
 դիտի քահանայի և կրօնաւորի վրայ, որ իր-
 բեւ քաղկեդոնական հաճոյ չէ իրեն, և այ-
 լանդակ մուրուրթիւններ այլ ընծայէ անոր:
 Աբուսահլ հնազոյն տեղեկութիւններն ա-
 ռած է իրմ առաջ գրողներէն, որոց մէկ ա-
 մենէն անուանի և գտնելը փափագիլին է
 Աբու-Հասան Շաքուշի անուամբ մէկն (Ash-
 Shadushis شادوش). Ժ դարու վերջ կամ ի
 սկիզբն ԺԱ ին մեռած որ գրեր է վանդոքից
 անուամբ գիրք մի (Դիքրապ ալ-Տիարաբ):

Հատ բան այլ առած է Թ դարու հեղինակ
 Անեւոր եպիսկոպոսի գրած Աղեքսանդրիոյ
 կամ Յակոբիկաց պատրիարքաց պատմութե-
 նէն, ուսկից նոր հեղինակը այլ շատ օգտուած
 են, բայց ամբողջ գործն դեռ չէ թարգմա-
 նուած յեւրոպական լեզուս: Ուրիշ աղբիւր
 մ'այլ է Եստրիքիոս անուանեալ՝ բայց քնիկ ա-
 նուամբ Սայիտ իպն էր-Պատրիկ պատրիարքն
 Մեքիդաց, + յամի 940: Այսոր գրածն
 թարգմանուած է լատինարէն և տպագրուած
 յՈքսֆորտ, յամի 1654-6: Դարձեալ նոյն,
 պէս եկեղեցական պատմիչ մի՝ Մահպուպ,
 Յակոբիկ եպիսկոպոս Մեքնացի:

Աբուսահլ ի պատմութեան՝ Մարտիրոսաց
 կուռած թուականը գործածէ, որ կու սկսի
 Դիոկլետիանոսի հլաժանաց հրովարտակէն,
 ի 29 օգոստ. 284 փրկչական տարւոյ. եր-
 բեմն այլ հիճրէդի թուականը յիշէ և Հմուտ
 է մահմէտական օրինաց և պատմութեանց,
 և ոչ շատ խորոյդ. երկար գրելով և իբր բուն
 նպատակ՝ Ղպտեաց եկեղեցիքն և վանորայքը՝
 աւելի յարեալ կ'երեւի այս ազգի, իբր հա-
 մակրօն, և անոնց մէջ ծնած և սնած. թէ և
 հաւանօրէն՝ քանի մի դարէ ի վեր յԵգիպտոս
 գաղթած Հայոց սերունդ է, թուի թէ և մեր
 նոր գաղթականաց նման բնիկ Հայրենի լե-
 զուին անգէտ կամ ոչ շատգէտ, արարեթէն
 գրեր է, իբրեւ գիտական լեզուաւ, որոյ հրմ-
 տութիւնն անտարակոյս է, նա և շատ պատ-
 միչներ յիշելէն: Բաց ի սկզբան բաւական
 երկար Հայոց վրայը գրածէն, այլ եւ այլ
 տեղ այլ յիշէ զնոյն Հայ պաշտօնեայն և
 Վզրուկս. և ուր որ Հայոց եկեղեցի և վանք
 կայ (գորս մեծը այլ թարգմանօրէն պիտի
 յիշեմ), բայց ամենեւին իր Հայազգի ըլլալը
 կամ ազգասիրութիւն՝ չի ցուցնեն. և ընդ-
 հանրապէս ոչ միայն անկողմնասէր, այլ և
 ցուրտ կ'երեւի, թէ և հաւատարիմ ի պատ-
 մութեան:

Այս մի յառաջարանս մասամբ առած եմք
 թարգմանչին եօթ կամ ութ թուղթ յառա-
 շարանութենէն, մասամբ ամբողջ Աբուսահլի
 գրոց թարգմանութիւնը կարդալով. ուսկից
 և պիտի քաղեմք այն կտորները միայն՝ որ
 վերաբերին Հայոց և թարգմանութեան ներ-
 քեւ կ'աւելցնեմք երբեմն թարգմանչին և իր
 օգնականաց տուած ծանօթութիւնները. եր-
 բեմն մեր կողմանց ինչ որ հարկաւոր համա-
 րիւմ: Յիշեմք և զայս, որ թարգմանիչն իւր-
 նամով երեք չորս ցանկ չիմած և գրած է ի
 վերջ թարգմանութեանն, յատուկ անուանց
 տեղեաց և անձանց, և ընդհանուր անուանց,
 որ փափագելի էր մեզ աւելի ճոյս ըլլալ. ա-
 սոնցմէ զատ և յառաջին ցանկ մ'այլ ըրած՝ և
 համարմ է եգիպտական եկեղեցեաց, թուով

707, և վանորէից՝ 181. բայց ասոնց վրայ կըրնար քանի մ'այլ տեսչընել¹ Յիշեմբ դարձեալ, որ յետ պատմագրութեան ԱրուսաՀլի կայ Յաւելուած թարգմանուած Աւ-Մաքրիզի պատմին (+1441) գրած Եղիպտոսի քրիստոնէից եկեղեցեաց և 72 տեղեաց, 86 վա. նորէից համառօտ պտորագրութիւն²:

Յետ զասոնք յիշելու՝ չեմք կըրնար յիշել խոր զգացմամբ՝ մեր նախնեաց յիշած և յանունէ նշանակած եօթանասունէն աւելի Հայոց վանքերը յԵրուսաղէմ և ի մերձաւոր

տեղիս, զատ յեգիպտականաց, ի ուսաւորչի օրերէն մինչեւ ի վերջ 2 դարու՝ շինուած, բնակուած, նորոգուած և կորուած: Միթէ զուտ ազգային հեղինակ մ'այլ՝ ԱրուսաՀլի և Շարուշի նման չէր գրած չափաւորապէս (և աւելի քան զԱնաստաս վարդապետ մեր յիշ դարու³) ասոնց պատմութիւնը. կամ պիտի ըլլայ մէկ մի՝ որ հետաքննէ անոնց անհետացեալ տեղուանքը, և յերևան հանէ անակնկալ և ոչ իսպառ անյուսալի նշխարքն, արձանագրերն, և այլ ինչ գիտեմ:

(Շարայարեի).

ՇԵՐԱՄԱԲՈՒԾՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱՑ ՆԱԽԱԿԱՆ ԵԱՆՕԹՈՒԹԻՒՆ

ՄԱՏՈՒԾՈՑ մեծութիւնը ոչ միայն յայտնի կը տեսնուի ի մեծամեծս ալ և ի մանունս: « Երկինք պատմեն զփառա Աստուծոյ » ըսաւ Սաղմոսեւ. « Զգուն, տեսնելով պարզ գիշերոյ մթան մէջ բիրաւոր աստղներ՝ կախուած երկնից անհուն տարածութեան մէջ, մին քան զմիւսն մեծ և նուազեղ, որոց առջև երկիրս է իբր հաս մի աւազոյ: Այլ ես կ'ըսեմ, թէ փառաւորեալ է Աստուած և ի մանունս և ի շնչին կարծեցեալ արարածս, որոց մէջ զարմանահրաշ կ'երևին ինչ երկու մանր միջատներն, Դերամ և Մեղու, որոց երկուքին ալ գործօն և վաստակաւոր կեանքը, իրենց կանոնաւոր կենցաղավարութիւնը, և առ մարդիկ ունեցած մեծ օգտակարութիւնը, իմ միտքս ապշեցուցած են, և իրենց աշխատաւորութիւնը և անխոնջ լանքը ինչ օրինակ եղած:

Մին թթնուոյ տերեւներէն կազմէ իր ներաթել հիւսուածը, որով արքունիք և տաճարներ կը զարդարուին գոյնազոյն կերպաներով: Միւսն ծաղկանց վրայէն հաւաքելով անուշիկ նեկտարը, յօրինէ մեղր քաղցրահաշակ ի կերակուր մարդկան, և մոմով կը լուսաւորէ Աստուծոյ տաճարները: Երկուքն ալ զարմանալեան արժանի ըլլալով, օւղեցի երկուքին ալ կենաց նկարագրութիւնը ի գրի առնուլ, և առանձին գրեւորելով հրատարակել, յուսալով թէ օգտակար կ'ընան ըլլալ իմ սիրելի ազգիս:

Սկսինք նախ շերամէն: — Դերամի թրթուրը, որ և կ'ըսուի Հնդիկ որդե, մեր բազում խնամոց արժանի եղած է իր օգտակարութեան համար, և վայրենի բնութենէն ընտանի բնութեան վերածուած, մինչդեռ ուրիշ միջատաց թրթուրներն՝ որ կ'ապականեն պարտէշները, արտերը և անտառները՝ կը լանամք ջնջել, Դերամի թրթուրը կամ որդը աւազալափ ձուէ ծնանելով, և իբր 30 օրուան մէջ հետզհետէ մեծնալով, ու չորս անգամ իր վրայի խորիւր ձգելով և դառնալով ի Հարսառնակ, կազմէ իր բնակարան

1. Նաբոյի մէջ ոչ 400 եկեղեցիք կային կ'ըսէ ԱրուսաՀլ: ԺՁ դարու համարք մի տեսչով վկայութեամբ գրէր, 160 եկեղեցի կային զիւր վարչութեան բայց ասեալով:

2. Մեծագամայն թարգմանութիւն գրող ԱրուսաՀլի ծանոթութեամբ: Յաւելուածով, ցանկերով և յտալեալ բանութեամբ 400էն քիչ մ'այլ աւելի երես է: քառասուլ թիւքներով. արաբերէն բնագիրն ուլ 142 երես:

3. Բազմավեղ Լոր Խ. էջ 23: